ՆՈՒԷՐՆԵՐ

1. Մեծ. պ. Կարապետ Ուլուխանեանցը ի յիշատակ իւր Հանգ. մայր Կատարինէի մի օրինակ «Լումայ» է նուիրում Մոզդոկի Հայոց Ծխական Դպրոցին 1903 թուից սկսած մշտապէս, որքան ժամանակ և գոյութիւն կունենայ մեր թերթը։

2. Մեծ. պ. Գրիգոր Արաքելեանը ներկայ տարուայ «Լումայ»ի 6 օրինակ գրուելով հինգը թողել է խմբագրութեանս տնօրինութեան։ Որոշուեցաւ ուղարկել 1, Թիֆլիսի տեխնիքական ուսումնարանի հայ աշակերտների գրադարանին, 2. Լայպցիգի ճեմարանական հայ ընկերութեան գրադարանին, 3. Օդեսայի համալսարանի հայ ուսանողներին, 4. Խարկովի համալսարանի հայ ուսանողներին և 5. Թիֆլիզի գործակատարների ընկերութեան։

3. Մեծ. պ. Նիկողայոս Բայսողլեանը «Լումայ»ի ներկայ տարուայ երկու օրինակ ստորագրուելով՝ մէկը թողել է խմբագրութեանս տնօրինութեան ուղարկել մի որ և է տեղ ի յիշատակ իւր Հանգ. մայր Կէկէլի։ Խմբագրութիւնս որոշեց «Լուման» ուղարկել Իւրևի հայ ուսանողութեան գրադարանին։

4. Մեծ. պ. Յար. Լիսինեանցը մի օր. «Լումայ» կարգադրել է ուղարկել որ և է հաստատութեան. մենք ուղարկեցինք Թիֆլիզի էժանագին գրադարանին։

5. Մեծ. պ. Քրիստափոր Գալստեանը մի օր. «Լումայ» նուիրեց Շուշուայ Հայոց Թեմական Դպրոցին։

Խմբագրութիւնը իւր խորին շնորհակալութիւնն է յայտնում այն բոլոր յարգելի եկեղեցական հայրերին և աշխարհական անձանց, որոնք հաճել էին Զատկական տօնի առիթով շնորհաւորականներ ուղղել խմբագրութեանս և բարեմաղթութիւններ անել «Լումային»։

Գաւառներում «Լումային» բաժանորդ գրուել ցանկացողները կարող են դիմել հետևեալ անձերին.

ԲԱԳՈՒ. Հ. Եղիշէ աւագ քահ. Գեղամեանց
Հ. Ներսէս քահ. Ցէր Կարապետեանց
Պ. Սէյեադ Ամիրեանց
Պ. Արմենակ Յակովբեանց
ԳԱՆՁԱԿ. Պ. Յովսէփ Խօջայեանց
Հ. Յուսիկ քահ. Վերդեանց

ԵՐԵՒԱՆ	Հ. Վահան քահ. Մամիկոնեանց
ԿԱՐՍ	Հ. Մինաս աւագ քահ. Տէր Պետրոսեանց
Ն. ՆԱԽԻՋ.	Հ. Պօղոս քահ. Բեղելեանց
ՇԱՄԱԽԻ	Հ. Տաճատ աւագ քահ. Մարաղեանց
ՇՈՒՇԻ	Պ. Սարգիս Մանասեանց
ՌՈՍՏՈՎ	Պ. Մինաս Բերբերեանց

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Տ. Վ.—Ստացանք Ձեզանից՝ 1, Ֆրանսուա դը Կիւրելի «Նոր կուռք», 2. Մ. Նորդաուի—դորա քննութիւնը, 3. Լուդվիգ Ֆուլդի «Հերոստրատ» և 4. Կանոնդոյլի «Ինչպէս բանակն ազատեցի»։ Բոլորն էլ իւր հերթին կը տպագրուին։

ԲԱՇՏ. Վ. ԹՈՒՐԵԱՆ.—Ձեր աշխատութիւնը «Հարազատներ» ստացանք։

ԲԱԳՈՒ. Գ. ԼՈՒՍԻՆԵԱՆ.—«Գրական անտէրութիւն» յօդուածը ստացանք և կաշխատենք տպել հետեւեալ համարում։

ԲԱԳՈՒ. ՔԱՋԲԵՐՈՒՆԻ.—«Ցիշողութիւնները» ստացանք, երբ համարը վերջանալու վրայ էր· կսկսենք տպել միւս համարից։

ԳԱՆՁԱՍԱՐ. Հ. ՆԻԿՈՂԱՅՈՍ Վ. Տ. ԱՒԵՏԻՔԵԱՆ.—Թումանեանի գեմրացու աշխարհաբար թարգմանութիւնը անշահեկան չէ հայ ժողովրդի համար, մանաւանդ հայ դիւղերում։ Եթէ կարողանայիք առանձին հրատարակել՝ վատ չէր լինի։

Պ· ԲՈՒՐԳ. «ՓՈՒՇ»-ԻՆ.— «Բողոք» և «Ձօն» բանաստեղծութիւնները չեն տպուիլ։

ԹԻՖԼԻՍ. Պ. Պ. «Ցանոսը» կտպուի միւս համարում։

ԲԱԼԱԽԱՆԻ. Շ. Ց·—Ձեր Բանաստեղծութիւնը չի տպուի։

ԹԻՖԼԻՍ. ՎԱՐՕՍԻՆ. Ստացանք Ձեր թարգմանութիւնները Heine-ից և Cheley-ից։

ԿԱՐՍ. Ս. Տ.-Մ·—Ստացանք «Իմ հիւանդութիւնը» և «Ուսուցչական յիշողութիւնից»։

Խմբագիր Հրատարակիչ ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ՍԱՂԱՆԵԱՆՑ